


ԽԱՐԱՐԱՐՈՒՄ

ՓԱՍՏԵՐ. ԹՎԵՐ. ԿԵՊՔԵՐ...

Անդրկասկան թագուհու պալատական պահակախմբի շոտլանդական երեք զվարդիականներ ենթարկվեցին դաժան պատժի՝ մի արտասովոր հանցանքի համար: Արշի մորթուց կարված տրադիցիոն բարձր զգակաների մեջ նրանք հարմարեցրել էին... կիսահաղորդիչային ռադիոընդունիչներ:



«Եվ ինչ» ջերմանավը գտնվում էր Կարմիր ծովում: Ռադիոստոր միացրեց Նավային տրանսլացիան և բարձրախոսներից զուրս հորդեցին վախի հնչյունները:



Փսան բուպի շափ, քանի դեռ ալիքների վրա տարածվում էր հաճելի մեղեդին, դեղինները, որոնք անտարբեր չեն երաժշտության նկատմամբ, լողում էին նավի հետ կողք-կողքի: Բայց ահա բարձրախոսներից հնչեց ականջ ծակող արևմտյան ջաղային երաժշտություն:

Նվ դեղինները, ասես հրամանով, սլացան մի կողմ...



Բեթհովենի թերակղզի, Լիստի և Գրիգի լեռներ, Գլինկայի կղզիներ, Մոցարտի և Հենդելի սառցադաշտեր, Մենդելսոնի, Վերդիի և Շու-

բերտի ծովախորշեր, Բախի ծովածոցային սառցալեռ... Որտե՞ղ է այդ բոլորը: Երաժշտության ինչ-որ հեքիաթային աշխարհում...

Ո՛չ, Այդ անուններին հանդիպում ես Անտարկտիդայի շրջանի քարտեզի վրա, որը գրեթե մեկուկես դար առաջ կոչվում էր Ալեքսանդր Առաջինի երկիր: 1947 թվականին այստեղ աշխատել է Ամերիկյան բևեռային արշավախումբը. ինչպես երևում է, հետազոտողներն այդ սառցե անդորրության անապատում կարոտել են մեծ կոմպոզիտորների երաժշտությանը: Ահա հենց այդ ժամանակ էլ ոչ վաղուցվա քսպիտակ բժենրի» կողքին ի հայտ են եկել երաժշտական անունները:



Ավստրալիայից 2500 մղոն դեպի արևելք, գտնվում է աննշմարելի մի կղզյակ, որը կոչվում է Նիուէ:

Անցյալ տարի գիտնականներից մեկն այդ կղզու վրա բույսերի մի քանի տեսակ անցնելու անհաջող փորձ կատարեց: Անհաջողությունից վհատված, նա նորզելանդական գիտնական էրնեստ Մարսդենին ուղարկեց մի քիչ հող՝ ուսումնասիրության համար: Նվ ի՛նչ. պարզվեց, որ այն ռադիոակտիվ է: Այդ օրվանից կղզին գիտության լուսատուների ուշադրության կենտրոնը դարձավ: Ժամանելով Նիուէ, նրանք ուսումնասիրեցին սննդամթերքը և հայտնաբերեցին այնպիսի ռադիոակտիվություն, որը գրեթե 100 անգամ գերազանցում է նորմալին:

Կղզյակում անընդհատ շփվելով են Հեյզերի հաշվիչները: Հարյուր եվրոպացիներ՝ բժեթիկներ, բուժքույրեր, գիտնականներ, այժմ ապրում են այնտեղ: Նրանք սնվում են միայն նորզելանդական կառավարության կողմից ուղարկված ուտելիքով: Իսկ կղզեբնակներն ամեն օր ուտում են իրենց ռադիոակտիվ կերակուրն ու հրաշալի զգում: Նրանք ֆիզիկապես ավելի առողջ


են, քան մոտակա կղզիների բնակիչները, կարող են համեմատաբար ավելի երկար ժամանակ աշխատել և կատարել առավել ծանր ֆիզիկական աշխատանք։ Բոլորը բարձրահասակ են, նույնիսկ կանանցից շատերի հասակը համեմատ է երկու մետրի։ Նիուէի բնակիչներին խորթ են խաղաղօվկիանոսյան կղզիներին բնորոշ հիվանդությունները։



Ֆրանսիական առևտրական մի ֆիրմա մասնագիտացել է կենդանիների համար խաղալիքներ պատրաստելու մեջ։ Կատուններին ղվարճացնելու համար ֆիրման ամսական թողարկում է 100.000 մուկ (իհարկե՝ արհեստական)։



Վաղուց ի վեր Հնդկաստանում փիղը համարվում է բազմաթիվ տոնախմբությունների կարևոր մասնակիցը։ Այդ մասին են վկայում ամենահին որմնանկարների վրա պատկերված փիղերը, որոնք վառ զարդարված, վեհոքեն ընթանում են տոնական թափորի առջևից։ Եվ մինչև այժմ էլ այդ բարեհոգի հակաները Ասիայի շատ երկրներում ծառայում են որպես հանդիսավոր շքերթների տրադիցիոն զարդարանք։



Մարդիկ նկատել են, որ էգ փղերն ավելի լավ են ննթարկվում վարժեցման՝ ամբոխի աղմուկն ու հարաշրոցը նրանք ավելի հանգիստ են ընդունում։ Բայց փղերը զնահատվում են իրենց ժանիքների մեծությամբ ու ձևով, իսկ էգերինը բարակ են ու տգեղ։ Եվ անհիշելի ժամանակներից սկսած տոն օրերին նրանց համար պատրաստում են «կեղծ ատամներ»։ Ժանիքների վրա հմուտ վարպետները հազցնում են փղոսկրի գույնի ներկված փայտե ժանիքներ։



Ավստրալիայի մոտ, Բրունի կղզում ապրում են պինգվինների գաղութներ։ Այդ հետաքրքրաշարժ թռչունները շրջում են անհիշելի ժամանակներից բացված արահետներով։ Բայց ահա կղզում հայտնվեցին մարդիկ, և հարկ եղավ ճանապարհ անցկացնել ճիշտ այն տեղով, որտեղով անցնում էր պինգվինների արահետը։ Երբ շինարարությունն ավարտվել էր, պարզվեց, որ պինգվիններն առանց ուշադրություն դարձնելու սլացող մեքենաներին, կտրում անցնում էին ճանապարհի այն մասով, որտեղով անցնելիս և եղել նրանց հին ուղին։ Բազմաթիվ թռչուններ իրենց «համառության» հետևանքով զրկվեցին կյանքից։



Այն ժամանակ կառուցեցին ստորերկրյա անցում՝ հետիոտն պինգվինների համար։ Սակայն թռչունները համաձայնվեցին հարցի այդպիսի լուծման հետ։ Նրանք մոտեցան թունելին, հավաքվեցին, «խորհրդակցեցին», և այդ ղավեշտական արարողությունից հետո... նորից սկսեցին անցնել նախկին ճանապարհով։

Իշխանությունները ստիպված եղան անցման այդ տեղում դնել նախազգուշացնող հատուկ նշաններ։




Բերինգյան ծովի ափին, ձյան մեջ, ծաղիկներ են աճում: Սովետական դիտնականների կողմից այդտեղ հայտնաբերվել է ալպիական վարդի նոր տեսակ: Կարծես հեքիաթում լինի. բույսն իր համար տեղ է մաքրել ձյան մեջ և... ծաղկել:

Իրականում պատճառը հետևյալն է. հյուսիսցի այս ծաղիկն ինքը ճառագայթում է արևից ստացած ջերմությամբ և հալեցնում իր շրջապատի ձյունը:



Դաժան սառնամանիքն ու սովը Հարավսլավիայում խախտեցին արջերի ձմեռային ունեցումը: Նրանք ստիպված էին ընդհատելու իրենց քունն ու ընկնելու... սնդիկ հտակց: Նրանց անցած ուղին դժվար չէր որոշել. այն նշված էր... տեղահանված հեռագրասլոններով:

Այդ զարմանալի երևույթը բացատրվում է ամենապարզ ձևով: Ինչպես հայտնի է, հեռագրասլոնները «երգում» են: Բավական է ականջը մոտեցնել դրանց, որպեսզի լսվի այնպիսի աղմուկ ու բվղոց, ասես ներսում մեղուների պարս է թափված: Այդ նույն կարծիքին են եղել նաև արջերը: Եվ քաղցրահամ մեղրը ժամ առաջ ճաշակելու ցանկությամբ նրանք տեղահան են արել հեռագրասլոնները:



Նարյան-Մարից ոչ հեռու (Նենեցական ավտոնոմ օկրուգ), սիրող որսորդ Գրիգորի Կոտկինը սպանեց մի բադ, որը, ինչպես պարզվեց, երկու սիրտ ուներ: Մասնագետների վկայությամբ գիտությանը հայտնի են երկու սիրտ ունեցող թռչուններ, բայց նրանք շատ հազվադեպ են լինում:

Սովորաբար նրանք երկար չեն ապրում: Մեր երկրի հյուսիսային մասում այդպիսի թռչնի հայտնաբերումը եզակի է:



Սաուդյան Արաբիայի թագավոր Իբն Սաուդի հրամանով ձերբակալված պալատական աստղագետ Սաիդ Մանդին վերջերս ազատվեց բանտից: Նա կալանավորվել էր թագավորի անձնական ինքնաթիռի՝ Ալպերում կրած աղետի պատճառով: Զախորդ աստղագետը մեղադրվում էր իր ծառայության պարտականությունների նկատմամբ անփութ զտնվելու և նախօրոք աստղերի միջոցով աղետը չկանխագուշակելու մեջ:

Դատարանը վերանայելով գործը, ընդունեց «սողոմոնյան վճիռ». Սաիդ Մանդինի համարել անմեղ, քանի որ աստղագետը պարտավոր էր դժբախտությունը կանխագուշակել միայն Արաբիայի սահմաններում:

